

գեպրում ամենայն լրջությամբ հարկավոր է հաշվի առնել նման միջամտությունը: Տ. Ավետիսյանը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է այլալեզու տարբերակներ ներկայացնող ազգանունները, ապիս գրանց լեզվաբանական զննչատվությունը:

Հնդինակր ինչպես այս, այնպես էլ մյուս հարցերի բնության գեպրում աշխատել է հիմնվել ընդհանուր կողմերի վրա, վեր հանել այն հիմնականը, որը բնորոշ է հայկական աշխատանքներին: Հնդինակր գրում է. «Մենք աշխատել ենք վեր հանել այդ բոլոր կողմերը և ուսումնասիրել գրանք իբրև համակարգ: Գիտակցում ենք, որ մեր տեսադաշտից դուրս մեծացած կլինեն առանձին մանրամասներ: Մարդանկանագիտությունը, իր լայն ըմբռնմամբ, համեմատաբար նոր բնագավառ է հայ լեզվաբանության համար: Ընթիվ նկատի լուսննանք անվանագիտական - ստուգաբանական աշխատանքները, ոպա այստեղ անելիքները լայն ստուգաբանք են բացում հետագա ուսումնասիրությունների համար» (էջ 257):

Սույն աշխատության հետ կապված շենք կարող լիտեսել մի այնպիսի երևույթի մասին, ինչպիսին են հնդինակի կողմից տրվող այն դիտությունները, որոնք տեղ են գտել շարադրանքի տողատակում: Դրանք այսպես կոչված հարակից բացատրություններ ու մեկնաբանություններ են, որոնք հետապնդում են այս կամ այն ազգանվան ծագումը, կազմությունը, բնիմաստը (էտիմոնը), դուզածեումը և այլն պարզաբանելու նպատակ: Այստեղ մեր դիտողությունն այն է, որ դրանք հաճախ լրիվ չեն, երբեմն չեն համոզում, առավել ևս որոշ գեպրում կասկածելի են կամ պարզապես սխալ: Այդպիսին են, օրինակ, 1-ին գլխի թիվ 10, 15, 2-րդ գլխի

թիվ թիվ 12, 3-րդ գլխի թիվ 4, 5, 9, 10, 16, 17, 36, 48, 81, 87, 91, 94, 97, 98, 101, 108, 109, 4-րդ գլխի թիվ 3, 5, 11, 12, 13, 16, 17, 18-րդ գլխի թիվ 12, 18, 19 ծանոթագրությունները և այլն: Հնդինակր նման գեպրում հարկ է համարում ծանոթագրությունը սկսել աչի բացատրում: «Հնարավոր է, թե թեմագրիկի էս արտահայտություններով»:

Աշխատության մեջ տեղ են գտել նաև անկախ կական բնույթի անհշտություններ: Քիչ չեն գեպրերը, նրբ միևնույն հնդինակի աշխատությունը տարբեր տեղերում տարբեր կերպ է վերկայակոչվում: Այս կամ այն գրավոր աղբյուրը երբեմն մատնանշվում է ոչ միակերպ: Միևնույն երկր տարբեր մասերը բերվում են իրրև առանձին միավորներ: Նկատելի է նաև այն, որ երբեմն չի պահպանվում ուղղագրությունը. գրաբար գրավոր աղբյուրները նշվում են դրաբարի կանոնների խախտումով, երբեմն՝ խառն նրման վրիպումներն ու անհշտությունները չեն պատշաճում սույն աշխատության շարադրանքին:

Մշակական ազգանունն աշխատության գրախոսման ընթացքում և վերջում արված դիտողությունները մտնումը բնույթ են կրում: Կարևորն այն է, որ այս աշխատությամբ հայկական ազգանունների ուսումնասիրությունը թեմատիկում է իր առաջընթացի նոր փուլը և ավելի մեծ ծավալ ու ընդգրկում ստանալու հնարավորություն է ձևեր բերում:

Տ. Ավետիսյանի «Հայկական ազգանուն» աշխատությունը շատ անհրաժեշտ գործ է հայաց լեզվի բառապաշարի պատմության, հայկական ազգանվան և առհասարակ հայերեն անձնանվան ուսումնասիրության բնագավառում:

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՏԱՆ

S. DER NERSESSIAN, A. MEKHITARIAN. Armenian Miniatures from Isfahan, Preface and Introduction by H. H. Catholicos Karekin II, Les Editeurs d'Art Associés, Armenian Catholicosate of Cilicia. Brussels, 1936, p. 219, fig. 124

S. DER NERSESSIAN, A. MEKHITARIAN. Miniatures Arméniennes d'Ispahan. Préface et Introduction de S. S. le Catholicos Karekine II, Les Editeurs d'Art Associés, Catholicossat Arménien de Cilicie. Bruxelles, 1936, p. 219, fig. 124.

Վերջերս Բրյուսելում հայ արվեստի վաստակաշատ ուսումնասիրողներ Ս. Տեր-Ներսեսյանի և Արթուր Միքիտարյանի աշխատասիրությամբ ֆրանսերեն և առանձին նաև անգլերեն լեզու-

ներով լույս է տեսել «Սպահանի հայկական մանրանկարները» գիրքը, որը նվիրված է Նոր Զուգայի Ամենափրկիչ վանքի Բանգարանի ձեռագրերի նկարազարդումներին: Այս հատորի

շնորհիվ առային անգամ գիտական շրջանառություն մեջ են դրվում հայկական մատյանների խոշոր հավաքածուներից մեկի բազմաթիվ գրքափոր գանձերի վերատպությունները:

Հանրահայտ Ամենափրկիչ վանքը և Նոր Զուգայի մյուս եկեղեցիները կառուցվել են զբլխավորապես XVII դարում, 1604 թ. Շահ-Աբասի կազմակերպած հայերի բռնագաղթից հետո: Այդ տաճարները ոչ միայն կարևոր են հայ ճարտարապետության, կոթողային գեղանկարչության ու կիրառական արվեստի պատմության տեսանկյունից, այլև այն առումով, որ այդտեղ հավաքված են գիտական աշխարհին մինչև օրս անծանոթ ու անմատչելի բազմաթիվ ձեռագրական հուշարձաններ: Վերջիններս մեծ մասամբ ստեղծված են Հայաստանում և տարբեր հայկական գաղթօջախներում: Դրանք այստեղ են բերվել զխավորապես XVII դարի սկզբին՝ հայերի բռնի տեղահանությունից ժամանակ: Մատյանների մյուս մասը Նոր Զուգայում է հայտնվել առանձին անհատների հայկական տաճարներին արած նվիրատվությունների միջոցով և ձեռք են բերված զանազան երկրներում: Ձեռագրերի մի կարևոր մասը ստեղծվել է անմիջականորեն Նոր Զուգայում կամ Պարսկաստանի այլ կենտրոններում և հանգրվանել տեղի վանքերում ու եկեղեցիներում: Ինչպես հայտնի է, Ամենափրկիչ տաճարի հավաքածուն մատյանների քանակով և կարեւորությամբ հաջորդում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանին, Երուսաղեմի սբ. Հակոբյանց վանքի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբնակությունների հավաքածուներին:

Գիտնականներին այստեղ պահվող գրքափոր հատորների հետ ծանոթացրեց 1902 թ. Ս. Տեր-Ավետիսյանի պատրաստած, իսկ ավելի ուշ՝ Լ. Մինասյանի լրացրած Նոր Զուգայի ձեռագրերի երկհատոր ցուցակը, որը լույս տեսավ Վիեննայում 1970—1972 թթ. ակադ. Լ. Խաչիկյանի, Օ. Ծգանյանի, Ա. Մաթևոսյանի, Ա. Զևյունյանի խմբագրությամբ: Այդ հուշարձանների ուսումնասիրման առումով կարևոր եղան Բրյուսելում էլիզաբեթյան թաղուհու եգիպտական հիմնարկության զխավոր քարտուղար, պրոֆ. Ա. Մխիթարյանի 1971 և 1972 թթ. Սպահան կատարած այցելությունները: Այդ տարիներին

երյուսելանակ գիտնականը օգնել է Նոր կառուցված թանգարանը կազմակերպելուն և ուսումնասիրել Նոր Զուգայի ձեռագրական հաշտությունները²: Մատյանների մանրակրկտներից նրա նկարած և դասակարգած լուսապատկերները հնարավորություն են տվել Ս. Տեր-Ներսեսյանին ձեռնարկելու այդ հուշարձանների ուսումնասիրման աշխատանքը, Երկու գիտնականների համատեղ ջանքերի արդյունքն է այս հատորի իրականացումը:

Խնդրո առարկա գրքի ներածականին հաջորդում է կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ. Սարգսյանի «Հայերի մշակութային ժառանգությունը Իրանում» համառոտ պատմական ակնարկը: Այստեղ ներկայացվում են հայերի և պարսիկների դարերի խորքից կնոդ պատմական, մշակութային առնչությունները, XI դարից հետո Իրանում հաստատված հայկական եկեղեցիները, հայաբնակ շրջանները, ունիթորական շարժումը և հայերի վերաբերմունքը դրան, Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով հայերի կողմից Նոր Զուգայի հիմնադրումը, ներանց ջանքերով առևտրի զարգացումը, տեղում ձեռագրերի ընդօրինակության գործի ծավալումը, հայկական տպարանի ստեղծումը, այսինքն ազդեցիկ և ուժեղ գաղթօջախի առաջացման պատմությունը: XVII դարի հայ մշակութային գործիչներից հիշատակվում են Սիմեոն Զուգայեցին, Հովհաննես Մրցուլը, նշվում է այդ ժամանակի Նոր Զուգայում աշխատող հայ նկարիչների թողած ժառանգությունը ի դեմս որմնանկարչական հուշարձանների: Հեղինակը անդրադառնում է նաև XVII—XX դդ. Նոր Զուգայի բնակիչների Ռուսաստան, Հնդկաստան, Ինդոնեզիա տեղափոխվելու պատմությանը, Սփյուռքի ստեղծման պատճառով պարսկահայ համայնքի ուժեղացմանը:

Անմիջապես այս նախաբանին հաջորդող «Մանրանկարների ուսումնասիրությունը» բաժնում Ս. Տեր-Ներսեսյանը ժամանակագրական կարգով քննության է առնում Նոր Զուգայի հավաքածուի պատկերազարդ մատյանները, մեկ առ մեկ նշելով նրանց գեղարվեստական կարեւորությունը:

Իր գիտական շարադրանքը նա սկսում է XII դարի հայ գրքարվեստի օրինակների հետազոտությամբ: Այդ ժամանակաշրջանի մանրանկարչության վերածնության եղակի նմուշներ են № 561 (158) և 531 (159) Ավետարանները, որոնց նկարազարդումներում շարունակում են

¹ Տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուգայի Ամենափրկիչ վանքի. հ. Ա, կազմեց Ս. Տեր-Ավետիսյան. Վիեննա, 1970: Ծուցակ ձեռագրաց Նոր Զուգայի Ս. Ամենափրկչյան վանաց թանգարանի. հ. Բ, կազմեց Լ. Մինասյան. Վիեննա, 1972:

² Տե՛ս Պատկերազարդ Սուրբ Ամենափրկիչ վանաց, խմբագիր՝ Մ. Վրդպտ. Աշճյան. Նոր Զուգա, Իրան, 1975:

գոյատեւել Ճ1 դարի հայ գրքարվեստին բնորոշ նախշամոտիվները: Ըստ գիտնականի, № 561 (158) Ավետարանում հայտնվող Քրիստոսի պատկերը ուշ շրջանի հավելում է և ժամանակակից չէ մատյանի գրչությանը: Երկրորդ ձեռագրի մանրանկարները նախորդ հատորի ձեռագրերումների համեմատ ավելի հարուստ են, իսկ գունաշարը բարդ: Անվանաթերթի ճակատագրի հուշկապարիկները և միահյուսվող գծերից կազմված զարդագիրը համապատասխանում են Ճ1 դարի հայ գրքարվեստի սկզբունքներին: Այս ձեռագրի պատկերների սխեմատիկ և վերացական ոճը հիշեցնում է X դարից հայտնի գեղարվեստական հնավանդ ուղղության մասին: Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ ընթացիկ իրենց համեմատաբար բնույթին, այս երկու մատյանները ուշագրավ են Ճ11 դարի երկրորդ կեսի Բարձր Հայքի մանրանկարչությունը հետազոտելու տեսակետից:

№ 56 (22) Ավետարանը 1187 թ. Մաշկեոր վանքում ընդօրինակել և նկարազարդել է Վարդան գրիչը: Ե՛վ ոճով, և՛ զարդամոտիվներով ձեռագրի պատկերները աղբյուրվում են նույն Մաշկեորում 1192 թ. Վարդանի գրած Ճաշոցի (Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանքի գրադարան, № 121) ձեռագրումներին: Նոր Զուղայի մատյանի որոշ էջերում հայտնվող ոսկու կիրառությունը բացակայում է նույն ժամանակի Բարձր Հայքի գրչագիր հատորներում: Այդ տարածքի քանդակագործության և ձեռագրերի նկարազարդումների սկզբունքները արտահայտվում են Նոր Զուղայի հավաքածուի № 547 (28) Ավետարանի ձեռագրումներում, որոնք 1220 թ. Արքակաղին կոչվող վանքում վրձնել է Վարդան անունով մի քահանայ:

1195 թ. Կիլիկիայում Ներսես Լամբրոնացու իղբեր՝ Ապիրատի համար է գրվել և ծաղկվել № 27 (24) Ավետարանը: Այդ մատյանի ընդօրինակողը՝ Կոստանդինը՝ հայտնի նկարիչ է, որի ձեռքի գործն են 1193 թ. Սկեռայի վանքում Ներսես Լամբրոնացու և նրա մյուս եղբոր՝ Իշխան Հևթում Լամբրոնացու համար ստեղծված Ավետարանի (Վենետիկ, Մխիթարյան միաբանության գրադարան, № 1635) մանրանկարները: Ցավոք, միայն վերջիններիս միջոցով կարելի է պատկերացնել, թե ինչպիսին պիտի լինեին Նոր Զուղայի ձեռագրի պատկերները, որովհետև դրանք կորել են: Սկեռայի վանքում աշխատած մյուս նշանավոր նկարիչը՝ Գրիգոր Մլիճեցին, Ստեփանոս քահանայի համար 1215 թ. գրել և ծաղկել է № 546 (25) Ավետարանը, որը Նոր Զուղայի հավաքածուի գանձերից է: Սերաբյան, «մեծահույս» գրիչը չի հասցրել ավարտել մատյանը և վախճանվել է:

Ստացողի ցանկությանը ընդառաջելով, 1216 թ. Կիլիկիայի Տարսոն քաղաքում ձեռագիրը ավարտել է Գրիգոր Սարկավազը: Գրիգոր Մլիճեցու 1197 թ. Ավետարանի (մինչև 1939 թ. գտնվել է Լիովի հայկական արքեպիսկոպոստությանում) պատկերների լուսանկարները և այս մատյանի ձեռագրումների համեմատությամբ Ս. Տեր-Ներսեսյանը պարզում է, որ «մեծահույս» գրչի գործն է խորանների և անվանաթերթերի կատարումը: Լիովի և Նոր Զուղայի մատյանների ավետարանիչների դիմանկարները՝ ոճական տարբերությունները օգնում են որոշելու Գրիգոր Սարկավազի վրձնած մասերը: Նրա մանրանկարները հայ գրքարվեստում այն առաջին օրինակներից են, որտեղ ավետարանի կոչքին երևան է գալիս նրա խորհրդանշանը: Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, այս մատյանը Գրիգոր Մլիճեցու արվեստի մասին եղած միակ վկայությունն է, որովհետև Լիովի ձեռագրի ներկայիս վայրը հայտնի չէ և, բացի այդ, Սկեռայում Գրիգոր Մլիճեցու սկսած և 1218 թ. Գրիգոր Սարկավազի ավարտած Նոր Զուղայի № 55 (26) Ավետարանը վնասվել և զրկվել է իր մանրանկարներից: Այստեղ զարմանալիորեն Ս. Տեր-Ներսեսյանի տեսադաշտից դուրս է մնացել նրան քաջ հայտնի Սկեռայի 1173 թ. Նաբեկը (Մաշոցի անվ. Մատենադարան, № 1568), որը նույնպես վրձնել է Գրիգոր Մլիճեցին: Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ № 546 (25) ձեռագիրը կրկնակի արժեք է ներկայացնում, քանի որ ծանոթացնում է նաև շնորհալի նկարիչ Գրիգոր Սարկավազի արվեստին:

Ճ111 դարի երկրորդ կեսի Կիլիկյան հայ գրքարվեստի աննախընթաց վերելքի բացառիկ օրինակներից է Նոր Զուղայի № 57 (161) Ավետարանը, որի հիշատակարաններում նշված են Կոպիտոսի ղեկավար տեր Կոստանդինը, նրա որդիներ Հեթումը, Լեոնը, Հալկամը և Գրիգորը: Ձեռագրի գրիչն է Ռուրենը, որից այլ մատյաններ չեն պահպանվել: Մատյանի հիշատակարաններից մեկում (էջ 172բ) նշված նրա անունը նախորդ ուսումնասիրողները³ չէին նկատել:

³ Տե՛ս Լ. Աղաբաբյան, Կիլիկյան մանրանկարչությունը Ճ11—Ճ111 դդ. Երևան, 1964, պատկ. 12—16, էջ 57—66: Հայկական մանրանկարչություն (ալբոմ), ներածական հոդվածք և նկարների բացատրությունները Լ. Ա. Դուռնովի, խմբագրությունը և առաջաբանը Ռ. Գ. Գրամբյանի, Երևան, 1969, էջ 205, մանրանկար 30:

⁴ Տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի..., հ. Ա, էջ 213—214:

և հիշատակարանների ոչ ճիշտ ընթերցման հետևանքով մինչև այժմ այս Ավետարանի գրչության հեղինակն է համարվել Գրիգորը, որը մեկն է վերր ընթերցման իշխաններից:

Ամենասկզբից նախատեսվել են ձեռագիրը՝ նկարազարդել շատ մանրամասն կերպով և այդ նպատակով գրիչը ընագիրը ընդօրինակելիս առաջին տարածություններ է թողել տողերի առանցքում: Այդուհանդերձ, մատյանի ձևավորումը անավարտ է մնացել և միայն Մատթեոսի հատվածն է ծաղկվել XIII դարում, այն էլ մի քանի նկարիչների ջանքերով: Մարկոսի և Ղուկասի ընագրերում հանդիպում են միայն շատ պարզ զարդամասերին, իսկ Հովհաննեսի ավետարանում ներկայացված մանրանկարները ավելի զարդավոր են ու շքեղ: Նկարազարդման այս եղանակը, որի համաձայն մանրանկարները ներմուծվում էին մեկ և ոչ թե երկու սյունակով ընթերցման ընագրի մեջ, հայտնի է XIII դարի այնպիսի նշանավոր կիլիկյան ձեռագրից, ինչպիսին է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7651 Ավետարանը: Զարմանալի զուգահեռություններ առաջին մի խումբ նկարիչների համագործակցությամբ է ծաղկված և նույնպես անավարտ է մնացել: Այս երկու, իրար ժամանակակից գրչագիր հատորների միջև նկարազարդման վերահիշյալ եղանակից բացի ուրիշ նմանություններ գրեթե չկան:

Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, մեկ առանձին ներկարի գործը պետք է համարել Մատթեոսի ներկարը, Հովսեփի պատմության զրվագները ներկայացնող մանրանկարը, Վերնուդը, Վերնուդը, որոնք աչքի են ընկնում միևնույն ոճական առանձնահատկություններով: Այդ պատկերների հեղինակը, գիտնականի կարծիքով, անդամն է այն նույն գեղարվեստական ընտանիքի, որին են պատկանում նաև XIII դարի երրորդ թաղողին Սմբատ Սպարապետի Ավետարանի (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7644) ավետարանիչների նկարողն ու Հովսեփ Սպարապետի Սկևռայի 1272 թ. Ավետարանի (Կ. Պոլիս, Բոսիկապու Սարայ Թանգարան) ձևավորողը: Ս. Տեր-Ներսեսյանը վերջին երկու մատյանների երկնագրողներին այստեղ զանազանում է, իսկ 1977 թ. իր գրքում Հովսեփին է վերագրում նաև Սմբատ Սպարապետի Ավետարանի ավետարանիչների պատկեր-

ների կատարումը, որը և պետք է համարել գիտնականի վերջնական կարծիքը այս հարցում, նկատի առնելով այն հանգամանքը, որ Նոր-Ջուղայի մանրանկարների մասին նրա այս ուսումնասիրությունը գրվել է շուրջ տասնվեց տարի առաջ և այդքան ժամանակ սպասել հրատարակության:

Նոր-Ջուղայի ձեռագրի մյուս նկարազարդումների վարպետը իր ոճով առանձնանում է XIII դարի կիլիկյան մանրանկարիչների շարքում: Նրա աշխատանքային շատ արագ է, զգեստների ծալքավորումը շեշտված է գծերի խաղով և դեմքերի ծավալային մշակումը բացակայում է: Փոքր պատկերներում այստեղ ներկայացված են բազմաթիվ մարդկային կերպարաններ և ճարտարապետական կառույցները շատ մանրամասն են ցուցադրված: Այս վարպետի վրձնի գործն են ճշգրտվել խնդրված, Օշովհանես Մկրտչի գլխատումը, Վերնուդը, Վերնուդը, որոնք հեղինակներն են այսպես կոչված Վերնուդ մանրանկարների վարպետները: Նոր-Ջուղայի ձեռագրի երկրորդ նկարիչի աշխատանքները ժամանակակից են առաջինի գործերին և նույն գեղարվեստական հոսանքի մեկ ուրիշ կողմն են ներկայացնում:

Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի դիմանկարներն ու երկու այլ մանրանկարներ կատարված են ոչ թե թղթի վրա, ինչպես մյուս պատկերները, այլ առանձին մագաղաթի թերթերի վրա: Դրանք առանձնանում են իրենց յուրահատուկ, շատ տարբեր ոճով և ավելի զարդավոր են ընագրին ընդօրինակելուց հետո: Այս աշխատանքներում կարելի է տեսնել նախորդների համեմատությամբ ավելի մուգ գունաշար, խիստ արտահայտություններով, ընդգծված մանրամասնություններով դեմքեր, որտեղ աչքերն առնված են խոր ստվերների մեջ և վերջիններս ակոսում են քթամատը քթի ծայրին միացնող գիծը ու շեշտում կնճիռները: Նկարիչը ձգտում

⁶ Տե՛ս S. Der Nersessian. L'Art Arménien des origines au XVII^e siècle. Paris, 1977, p. 143.

⁷ Տե՛ս Р. Г. Драмбян. Из истории армянской миниатюры XIII—XIV вв.—Известия АН АрмССР, Общественные науки, 1948, № 5, Ереван, с. 51—78; Վ. Ղ ա զ ա ռ յ ա ն. Սյուսետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ—XIV դարի սկիզբ). Երևան, 1984:

⁸ Տե՛ս A. Mekhitarian. Un be-
évangile du XIII^e siècle. — Orientalia Lovan-
niensia Periodica. T. 16/7, 1975—1976, p. 389—
—395.

է փոփոխել զգեստների գույները՝ ստվերները նշելու և զարդային նկարագիրն ավելացնելու նպատակով: Բացի այդ տեղ-տեղ հագուստների մակերեսին հայտնվում են ոսկով, նշված ծալքեր (ոսկեգրություն): «Թաղումը», «Յուշաբեր կանայք գերեզմանի մոտ» և մի քանի այլ պատկերներ աչքի են ընկնում այսպիսի առանձնահատկություներով և, եթե ծաղկված չեն նախորդ վարպետի ձեռքով, ապա անկասկած դրանց հեղինակը նույն դպրոցի ներկայացուցիչն է: Մանրանկարների այս խմբում զգացմունքային բովանդակությունը շեշտված է ոչ այնքան արտահայտություններով, որքան շարժումներով: Եթե Մատթեոսի ավետարանի առաջին գլուխներում պատկերները հմայում են մեզ ձևերի ներագեղությամբ, ներդաշնակ ներբերանգներով, ապա վերջին հատվածներում դրանք սպառնում են ուժով և դրամատիկ ներկայացում: Առաջին, երրորդ և չորրորդ ծաղկողների մանրանկարների շատ նման ոճական առանձնահատկությունները հանգստեցնում են գալիս XIII դարի վերջին տասնամյակներում ստեղծված ձեռագրերում, օրինակ 1287, 1295 թթ. Ավետարաններում (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 197, 6290): Այդպիսով մեկ ձեռագրի ներսում կողք կողքի հանդես են գալիս XIII դարի կիլիկյան գրքարվեստի երկու տարբեր ուղղությունները:

Նոր Զուղայի մատյանի նախաշախի հատվածների կատարմանը մասնակցել են ևս երկու հոսանքների ծաղկողներ: Նրանցից մեկը ձևավորել է Կոպիտառա դղյակի տեր Կոստանդինի և նրա որդիների ընծայականը և խորանները: Նրա մանրանկարները ժամանակակից են ձեռագրի գրչությանը:

Հովհաննեսի քնագիրը զարդարող մյուս ներկարիչը ապրել է XVI դարի վերջին. նրա աշխատանքակեր չի համապատասխանում իր նախորդների ոճին, զգալիորեն գիշերով էատարելություն առումով:

Նոր Զուղայի հավաքածուի № 519 (42) Ավետարանը 1329 թ. Ակներ վանքում (Կիլիկիա) ընդգրկնակել է Կարապետ քրիչը: Այս ձեռագրի մանրանկարների հսկայական չի նշված հիշատակարաններում, բայց Ս. Տեր-Ներսիսյանը, ելնելով պատկերների ոճից, գտնում է, որ դրանք XVI դարի ճանաչված նկարիչ Սարգիս Պիծակի գործն են:

Դեռևս XIII դարում Խալիայի տարածքում հիմնված բազմաթիվ հայկական վանքերից՝ «Հոգեմեծներից» մեկում է գրված Նոր Զուղայի № 38 (39) Ավետարանը: XVI դարի սկզբին այն պատկերներ է լեհաստանի հայերին բռնի կաթոլիկացնող արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչին: Ձեռագրի հիշատակարաններից պարզ-

վում է, որ գրիչը՝ Տիմոթ քահանան ընդօրինակել է մատյանը Հոռմում 1510 թ. և պահպանել տունն Հայոց Պերուշիա քաղաքի Խալիայում ստեղծված հայկական մյուս գրչագիրների նման սա ևս ծաղկված է այնպիսի պատկերներով, որոնք հայկական զարդարվեստի տարրերի և իտալական արվեստից փոխառված մոտիվների յուրահատուկ խառնուրդ են ներկայացնում: Ակամայից հիշում են Մաշտոցի անվան Մատենադարանի 1331 թ. Ավետարանը (ձև. № 7628), որը ընդօրինակվել է Պերուշիայում (գրիչ և հավանաբար մանրանկարիչ Երեմիա)՝ որովհետեւ երկու մատյանների պատկերազարդումները միմյանց են աղերսվում բազմաթիվ առանձնահատկություններով:

Հայ-վրացական դաշնակից զորքերի ուժերով Հայաստանի հյուսիսային գավառների ազատագրումը սելջուկյան լծից հիմք հանդիսացավ այդ հողերում հայ արվեստի նոր վերածննդի, որը Նոր Զուղայի հավաքածուում ներկայացված է Իգնատիոս Հոռմոսցու ծաղկած 1286 թ. Ավետարանով (№ 36 (156))⁸: Այս հուշարձանը Ամենափրկիչ տաճարի Բանգարանի մատյաններից ամենահայտնին է և բազմիցս է դարձել հիմնականների ուղարկության առարկան: Մերի տարածքում, Հավուց Թառում և այլուր գործած իգնատիոսի մասամբ կամ ամբողջովին ծաղկած, առ օրս հայտնի յոթ ձեռագրերից միայն այս՝ Ավետարանում է պահպանված տեղական նկարաշարքը, որը հարուստ նյութ է տալիս XIII դարի հայ լավագույն մանրանկարիչներից մեկի արվեստը ուսումնասիրելու առումով: Շոթոկանց տոհմի ներկայացուցիչ Բոնավորի պատվիրած մատյանը պահ է տրվել հոգևոր Ս. Սարգիս Եկեղեցուն և դա այնքան կարևոր իրադարձություն է դիտվել, որ մենաստանի պատին այդ մասին արձանագրություն է աշվել:

Իգնատիոսի Ավետարանում պահպանվել է Բոնավորի և նրա կնոջ Տղաթիկինի պատկերը: Ս. Տեր-Ներսիսյանը վերլուծում է Իգնատիոսի

⁸ Տե՛ս А. Н. Свирин. Мпннатюра древней Армении. М.—Л., 1939, с. 97, 101—102; Х. Бушхазуэч. О заимствовании италянский, стилистических элементов в армянской книжной живописи.—Четвертый международный симпозиум по армянскому искусству, Ереван, 11—17 сентября, 1985, Тезисы докладов. Ереван, 1985, с. 62—63.

⁹ Այս ձեռագրի մասին կա հին և նոր ընդարձակ գրականություն. տե՛ս Կ. Մաթևոսյան. Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս.—Տիգրան Երևանի համալսարանի, 1982, № 9, էջ 121—133:

«և, ինքնատիպ պատկերագրությունը՝ ավանդական տեսարանների խիստ յուրօրինակ հաղորդումը, Գիտնականի կարծիքով, նկարչի արվեստը կարևոր փուլ է նշանավորում Բարձր Հայքի մանրանկարչության պատմության մեջ»:

Նոր Զուղայի հավաքածուի № 477 (35) Ավետարանի ուսումնասիրությունը շահեկան է հայ դրարվեստի Գլաձորի դպրոցի ուսումնասիրման առումով: Այն հիմք է տալիս ենթադրելու, որ Գլաձոր եկող կիլիկիացի նկարիչներն իրենց աշակերտների համար որպես նախօրինակ լինում էին կիլիկյան ձևագրեր: Այդ մատյանը գրված է Սյունիքի վանքերից մեկում (Տաթևում), որովհետև հիշատակարանի հեղինակը Իվանե Օրբելյանն է՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի զարմիկը ու հրա մահից հետո Սյունիքի արքեպիսկոպոսը: Իվանե Օրբելյանի համար 1300 թ. ընդօրինակված Ավետարանը ունի նորարարիչ նկարազարդումներ, որոնք աղերսվում են XII դարի կիլիկյան դրարվեստի օրինակներին: Ս. Տեր-Ներսեսյանի համոզմամբ ձեռագրի խորանները նախշային մանրամասներով կերված են Թորոս Փիլիսոփայի 1290 թ. Դաղարկում ծաղկած Ավետարանի (Լենինգրադ, էրմիտաժ, № V3-835)¹⁰ համապատասխան ձևավորումները: Միաժամանակ նույն նկարչի պատկերազարդած 1290 և 1295 թթ. մատյանների (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 5736, 6290) անվանաթերթերը կատարման առանձնահատկություններով հիշեցնում են նոր Զուղայի Ավետարանի համապատասխան մասերը: Գիտնականը այս առիթով նկատում է, որ Բարձր Հայքի մանրանկարչության զարգացին կողմն է հելլավորացի ազդվել կիլիկյան դրարվեստից, իսկ մարդկային կերպարները ընդգրկող պատկերներում Բարձր Հայքի վարպետները հավատարիմ են մնացել տեղական ավանդույթներին: Այսպես, օրինակ, նոր Զուղայի հավաքածուի № 47 (43) Ավետարանի խորանները հիշեցնում են կիլիկյան ստեղծագործությունները, մինչդեռ տերմական նկարները խիստ տարբերվում են դրանցից:

№ 47 (43) ձեռագիրը 1330 թ. ծաղկել է Կիրակոս Թավրիզցիի Ջղավնա անպատում, որի տեղը հայտնի չէ: Պատվիրատուները՝ Վի-

դենը (վանական անունով Վրթանես) և իր եղբայր Պիլարը պատկանում են Սենեքերիմյան ավատակտն գերդաստանին: Ըստ հիշատակարանի, նրանց թույլ տրված է կրնն է եղել իշխան Չեսաթ Օրբելյանի Դժբախտաբար Սենեքերիմյանների տիրույթների տեղը հայտնի չէ և սա Կիրակոս Թավրիզցուց մեզ հասած միակ նկարազարդ մատյանն է: Մանրանկարների ուճից և պատկերագրությունից կարելի է եզրակացնել, որ հուշարձանը ստեղծվել է Սյունիքում: Ձեռագրի նկարազարդումների կատարողական բարձր արվեստը վկայում է, որ դրանց հեղինակը առաջնակարգ վարպետ է: Կիրակոս Թավրիզցու մասին գրել են Օ. Ավետիսյանը, Ս. Տեր-Ներսեսյանը, Ա. Մխիթարյանը¹¹, բայց առայժմ միայն այս գրքի գումավոր վերատրուկություններով է ներկայացված անմասն ծաղկողի ներկայակի առիթնող երանգաշարը: Վերլուծելով Կիրակոս Թավրիզցու աշխատանքները, Ս. Տեր-Ներսեսյանը մատնանշում է զարգացման առատ ներթափանցումը նրա տերմական պատկերների մեջ, կարմիր և կապույտի գերակշռությունը բացառիկ պաթառ գունային համագրություններում, զգեստների ծալքավորման զրաֆիկական բնույթը, պատկերազարդական հին նախօրինակների օգտագործումը:

Գիտնականի կարծիքով, այս մատյանի և 1302 թ. Մոմիկի ծաղկած Ավետարանի (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 6792) նկարազարդումների միջև կա կանոնիկ հատկանիշների արտակարգ նմանություն: Կիրակոսի մատյանի առանձին ձևավորումների համար նախօրինակներ են ծառայել շատ հին, յուրահատուկ պատկերներ, որոնք ծանոթ են եղել նաև XI դարի հայ մանրանկարիչներին:

Նոր Զուղայի թանգարանի գրադիր հատորների շարքում բիշ չեն նաև վասպուրականում կամ հարևան նահանգներում ընդօրինակված գրքերը: № 481 (44) Ավետարանը գրված է 1330 թ. Լանկչենում, որի տեղը հայտնի չէ: Ձեռագիրը ծաղկող Կիրակոսի ոճը, ըստ գիտնականի, հատկանշական է վասպուրականի և

¹⁰ См. Т. А. Измайлова. Киликийская рукопись 1290 г. и ее мастер Торос-философ.—Сообщения Государственного Эрмитажа. вып. 23, Л., 1962, с. 45—49. Ее же: Армянские иллюстрированные рукописи Государственного Эрмитажа. Каталог.—Труды Государственного Эрмитажа, т. X, Л., 1969, с. 110—114.

¹¹ См. О. Avédissian. Peintres et sculpteurs arméniens. Le Caire, 1939, p. 71; S. Der Nersessian. L'Évangile du Matenadaran № 10. 525 de l'an 1306 contribution à l'étude de la miniature en Siwnik au XIV^e siècle.—Revue des Études Arméniennes, 1982, t. XVI, Paris, p. 340—343. Կիրակոս Թավրիզցու ձեռագրին էր նվիրված Ա. Մխիթարյանի զեկուցումը 1985 թ. Երևանում կայացած հայ արվեստի շրջագծի միջազգային գիտաժողովում:

հարակից շրջանների մանրանկարչական հուշարձաններին:

Կասկածից վեր է, որ այս մանրանկարչի իր ժամանակի լավագույն վարպետներից է: Այստեղ նրա վրձնած պատկերներից հատկապես հմայիչ են պատվիրատուների՝ Կոստանգի և Նրա կնոջ՝ Ավագ տիկինի, ինչպես նաև Ներոանց մերձավորների դիմանկարները, որոնք զաղափար են տալիս ոչ թե պարզապես այդ իրական մարդկանց արտաքինի մասին, այլ սովյալ բնակավայրի ունեոր գերդաստանների տարազի վերաբերյալ: Վանա լճից հարավ-արևմուտք գտնվող Խիզան քաղաքի XIV դարի մանրանկարչության ուշագրավ նմուշներից է Բերկրիում 1362 թ. Հովհաննես քահանայի ծաղկած Ք 404 (172) Ավետարանը, որի ձևավորումների պատկերազրույթունը կրկնվում է նույն վարպետի 1335 թ. հեղինակած Ավետարանի (Փարիզ, Ազգային գրադարան, Ք 333) նկարազարդումներում: Այս կարգի ստեղծագործություններում նկարիչը հրաժարվում է իրական աշխարհի հաղորդումը տալուց, բայց կերպարանքների շարժումներով ու դեմքերի արտահայտություններով ձգտում է կենդանացնել տեսարանները:

Ս. Տեր-Ներսեսյանը մատնանշում է խնդրո առարկա ձևագրի պատկերների յուրահատուկ, տեղական գեղարվեստական առանձնահատկությունները: Նույն գրչականությունն է վերաբերում Նոր Զուղայի Ք 689 (II, 150) Ավետարանը, որի Խիզանի Գամաղիկ վանքում 1391 թ. ընդօրինակել է Նահապետ կրոնավորը: Այս և նախորդ մատյանի նկարազարդումների միջև կան ուշագրավ ընդհանրություններ և տարբերություններ, որոնք չեն վրիպել գիտնականի ուշադրությունից:

Նոր Զուղայի հավաքածուի կազմում կան XV—XVII դդ. մի շարք պատկերազարդ մատյաններ, որոնց ուսումնասիրությունը կարևոր է Խիզանի, ինչպես նաև Վանա լճի շրջակայքի այլ կենտրոնների գրքարվեստի պատմությունը ամրադրացնելու տեսակետից: Այս կարգի հուշարձաններից է Ք 26 (36) Ավետարանը, որը ընդօրինակվել է Կեսարիայում 1303 թ., բայց նկարազարդվել է միայն XV դարում: Այն մեկն է շուրջ 30-ի հասնող ձևագրերից, որոնք 1432—1482 թթ. ընթացքում Վանում, Կոստյուկյանցում, Արճնշում և հարևան վայրերում ծաղկել է նշանավոր նկարիչ Մինասը: Նրա բազմաթիվ աշակերտներից մեկի՝ Կարապետ Բերկրեցու վրձնած մատյաններից Նոր Զուղայում է հանգրվանել Ք 476 (62) Ավետարանը, որը 1472 թ. ընդօրինակել է գրիչ Հովհաննեսը Կրտուց կղզում: Նույն խմբի ձևագրերից է Մոկուի Գրեկանց գյուղում 1447 թ. գրիչ Վարդանի

ու անհայտ ծաղկողի կատարած Ք 559 (54) Ավետարանը և Արժեկում 1460 թ. Դանիել քահանայի գրած ու անհայտ նկարչի ձևավորած Ք 529 (58) Ավետարանը: Վասպուրականյան ոճի ազդեցությունը նկատելի է նույնիսկ շատ ավելի հեռու ստեղծված Ք 163 (211) ճաշոցում, որը 1457 թ. Ուրծ գյուղում (Այրարատ) ընդօրինակել է Խաչատուր գրիչը և Մալգիկ անապատում (Աղվանք) ծաղկել Գրիգորը:

XVI դարի հայ գրքարվեստը Նոր Զուղայի հավաքածուի մեջ ներկայացված է Ք 471 (96) Ավետարանով, որը Իսկանդր Գոմաց վանքում գրել և ծաղկել է Հովսեփ Եպիսկոպոսը: Այս ձևագրի առանձին մանրանկարները կրկնում են 1577—1579 թթ. Մարտիրոս Խիզանցու ձևավորած Ավետարանի (Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանքի գրադարան, Ք 2569) պատկերները, որոնք աղղված են Լիլիկյան գրքարվեստից: Մարտիրոս Խիզանցին բազմաթիվ աշակերտներ պատրաստած Խիզանցի մանրանկարչների ու գրիչների նշանավոր գերդաստանից է, որի հիմնադիր Մարգիսը սովորել է վերը հիշված Կարապետ Բերկրեցու սան՝ գրիչ և ծաղկող Հովսեփ Աղթամարցու մոտ:

Որոշ հուշարձանների առիթով Ս. Տեր-Ներսեսյանը անդրադառնում է հայ մանրանկարչության մեջ հայտնվող ոչ ավանդական առանձնահատկություններին, օրինակ՝ Նոր Թեմաներին ու եվրոպական արվեստի, մասնավորապես, փորագրությունների ազդեցությանը: Վերջինների իմացությունը իրեն ղեկավարել է տալիս Ք 670 (104) Ավետարանում, որը ստեղծվել է 1605 թ. Մարտիրոս Խիզանցու զարմիկ ու սան Խաչատուր ծաղկողի և գրիչ Հովհաննեսի համագործակցությամբ: Հիշատակարանի համաձայն այս գիրքը գրվել է Մոկսում, իսկ պատկերազարդվել Խիզանում:

Ք 396 (105) Ավետարանը 1607 թ. Նոր Զուղայում ծաղկել է լավագույն հայ մանրանկարիչներից մեկը՝ Հակոբ Զուղայիցին, նշանավոր Զաքարիա Գեոմետրի Եպիսկոպոսի աշակերտը: Ուսուցչին իր վարպետությամբ գերազանցած փայլուն Լրփնագրողը ծնվել է Հին Զուղայում և կնքել իր մահկանացուն հավանորեն 1613 թ.: Թերևս նրան նկատի ունի Ք 491 (215) Ճաշոցի գրիչը, որը ողբում է ռադարգրիչ գրոց և տանց Նաղաշի և քաղաքատուղար Տեր Հակոբի մահը այդ տարի, համեմատելով նրան Նրուսաղեմի տաճարը կառուցող Բերսևիկի ճարտարապետի հետ: Նոր Զուղայի գրքարվեստի դպրոցի ներկայացուցիչներից է և Սարգիս արեղան, որի 1607 թ. գրած և ծաղկած Ք 412 (106) Ավետարանի մանրանկարներում հաճախ կրկնված է Հակոբ Զուղայցու մատյանի ձևավորումների պատկերազարդ-

թյունը՝ Սարգիս արևդան համագործակցել է նաև Մևսրոպ Խիզանցուն հետ, որի աշխատանքներից նոր Զուղայում է գտնվում նույն քաղաքի մոտ՝ Հարևան գյուղում 1630 թ. ծաղկված № 466 (241) հայամավորքը։ Մևսրոպը աշակերտել է հայտնի նկարիչ Սարգիս Մաղմանին, Մարտիրոս Խիզանցուն, ինչպես նաև վերջինիս որդուն՝ Գրիգորիսին։ Մևսրոպը սկսել է աշխատել № 670 (104) Ավետարանը ծաղկող Խաչատուրի հետ Խիզանում։ Մևսրոպ Խիզանցուն հայամավորքի «Սոգերի Երկրպագությունը» մանրանկարը, ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, գործն է մի անհայտ վարպետի, որի ձեռքի տակ են եղել արևմտյան արվեստի նմուշներ։ Կիլիկյան մանրանկարչության կամ եվրոպական արվեստի ազդեցությունը կամ դրանց համատեղ ներգործությունը դիտվում է նոր Զուղայում ստեղծված մի քանի այլ ձևագրերում ևս, օրինակ № 398 (116) Ավետարանում, որը 1634 թ. ծաղկել է Ստեփանոսը, № 219 (249) հայամավորքում, որը 1658 թ. նկարադարձել է Տեր-Ստեփանոսը, № 512 (250) Հայամավորքում, որը 1661 թ. ձևավորել է Հայրապետը։ Վերջինս XVII դարի Երկրորդ կեսի նոր Զուղայի առաջնակարգ մանրանկարիչներից է և վրձնել է, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, նաև № 506 (316) Խորհրդատետրի պատկերները։

1687 թ. այդ Խորհրդատետրի հիշատակարանում Հայրապետը նշվում է որպես միայն մատյանի գրիչ։ Նրա աշխատանքը համարվող մանրանկարների թվում կան այնպիսի օրինակներ, որոնք ստեղծված են շատ յուրահատուկ, մինչև այդ չհանդիպող թեմաներով։

Նոր Զուղայում XVII դարում ընդօրինակված և նկարադարձված մատյանների շարքում մեծ թիվ են կազմում Աստվածաշնչերը։ Դրանցից Ամենափրկիչ վանքի Թանգարանում է հանգրվանել № 15 (1) ձեռագիրը, որը ստեղծվել է 1662 թ. գրիչներ Մարկոսի, Հովսեփի, Հովհաննեսի և Հակոբի համատեղ ջանքերով։ Այս մատյանի և նույն դարում նոր Զուղայում ընդօրինակված մի քանի Աստվածաշնչերի մանրանկարների միջև կան պատկերագրական ակնհայտ ընդհանրություններ, որոնք, ըստ գիտնականի, նույն նախօրինակներից օգտվելու արդյունք են։ Նոր Զուղայում կատարված Ս. Տեր-Ներսեսյանի քննած վերջին մատյանը № 516 (149) Ավետարանն է, որի գրիչներն են դպիր Ամիր Սարգիսը և Մարտիրոս քահանան։ 1696 թ.

այս ձեռագիրը իր պատկերների գեղարվեստական մակարդակով դիչում է վերը բերված Աստվածաշնչերին, բայց կարևոր վկայություն է այն մասին, որ նոր Զուղայում XVII դարի վերջին դեռևս շարունակվում էին մատյանների ընդօրինակել, անգամ 1638 թ. հետո, երբ քաղաքում Խաչատուր Կեսարացին հիմնադրեց հայկական տպարանը։ Գրչագիրների արտագրությունը նոր Զուղայում գոյատևեց նույնիսկ մինչև XVIII դարի սկիզբը, որովհետև պատվիրատուների համար այդ մատյանները անգին գանձեր էին և Լրաշխիք նրանց հոգիների փրկության։

Ս. Տեր-Ներսեսյանի ուսումնասիրության մեջ թիվ թե շատ մանրամասն բնական 29 ձևագրերը ընտրված են նոր Զուղայի հավաքածուից որպես առավել ներկայանալի օրինակներ։ Դրանց մանրակրկիտ ներկայացումն ենք գրտնում պրոֆ. Ա. Մխիթարյանի «Զեռագրերի ներկարագրությունը» խորագիրը կրող բաժնում։ Այստեղ ամենայն բախանդորությամբ նշվում են յուրաքանչյուր մատյանի ստեղծման վայրը, թվականը, գրիչների, ծաղկողների անունները և այլ ձևագրագիտական ու գեղարվեստական առանձնահատկություններ։ Այս հատորի հրատարակությունը կարևոր երևույթ է և գալիս է լրացնելու Մաշտոցի անվան Մատենադարանի, Նրոսադեմի Ս. Հակոբյանց, Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան միաբանությունների և այլ հավաքածուների հայկական ձեռագրերին ներկայացնող ուսումնասիրությունների շարքը։

Դժբախտաբար նոր գիրքը չունի օգտագործված գիտական գրականության ցանկ և ժանտիպագրություններ, որոնք թույլ կտային պատկերացնել յուրաքանչյուր մատյանի ուսումնասիրման աստիճանի և պատմությունը։ Այդ բացը մասամբ կարելի է լրացնել այստեղ մեջբերված աղբյուրներով։

Գրախոսվող աշխատությունն ունի 124 սև ու սպիտակ և գունավոր վերատպություններ, որոնց դասավորությունը այնքան էլ հարմար չէ գրքի օգտագործման տեսակետից։ Նույնպես հաջող չէ և առանձին գունավոր վերատպությունների որակը։ Սակայն այս երևույթները չեն նսնմացնում աշխատության արժեքը։ Այն իր պատմավոր տեղն է գրավում հայ մանրանկարչության մասին գրված լավագույն ուսումնասիրությունների կարգում։

Լ. Բ. ՉՈՒԴԱՍՅԱՆ